

---

**ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՎՐՈՒՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ  
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱՎԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ**

Թեև հայ-բրիտանական դիվանագիտական ու միջխորհրդարանական հարաբերություններն սկիզբ են առել ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո, բայց երկար ժամանակ դրանք հիմնականում ճանաչողական բնույթի էին: Այդ տեսակետից հատկանշական է, օրինակ, Մեծ Բրիտանիայի արտոգործնախարարության հրավերով 1996 թ. նոյեմբերի 18-21-ը ՀՀ ԱԺ պատգամավորների պատվիրակության այցը ԱԺ նախագահ Բ. Արարքցյանի ղեկավարությամբ:

Հայ-բրիտանական հարաբերությունները գործնական-կառուցողական բնույթ ստացան հատկապես 21-րդ դարասկզբին, երբ դրանց իրականացմամբ սկսեցին զբաղվել պետական կայացած կառույցները: Այս իմաստով բեկումնային կարելի է համարել Մեծ Բրիտանիայի միջխորհրդարանական միության գիտական խմբի հրավերով 2002 թ. հունվարի 26-ից փետրվարի 3-ը հայ խորհրդարանականների այցը Մեծ Բրիտանիա ՀՀ ԱԺ նախագահ Ա. Խաչատրյանի ղեկավարությամբ: Այն, ըստ էության, երկու երկրների խորհրդարանականների բարձր մակարդակի առաջին հանդիպումն էր, որը բրիտանացիների իսկ գնահատմամբ որակվեց պատմական:

ԱԺ պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ լորդ-կանցլեր Դերրի Իրվինի, Համայնքների պալատի խոսնակ Մայքլ Մարտինի, Միջխորհրդարանական միության բրիտանական խմբի նախագահ Ջոն Օսթինի հետ: Փոխադարձ հետաքրքրություններ ներկայացնող հարցերի քննարկման ընթացքում ՀՀ պատվիրակության ղեկավարը տեղեկացրեց, որ ներքաղաքական զարգացումները Հայաստանում ընթանում են բնականոն հունով, որ երկրում վիճակը բավականին կայուն է և գտնվում է օրենսդրական ամուր հիմքերի վրա: Նա միաժամանակ հույս հայտնեց, որ առաջիկայում ևս Մեծ Բրիտանիան կշարունակի օժանդակել Հայաստանին՝ ներգրավվելու եվրոպական կառույցներին<sup>1</sup>:

Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի խոսնակ Մայքլ Մարտինը Վեստմինստերի իր նստավայրում ԱԺ պատգամավորների պատվին կազմակերպեց ընթրիք, որին բրիտանական կողմից մասնակցում էին Միջխորհրդարանական միության բրիտանական խմբի նախագահ Ջոն Օսթինը, գլխավոր քարտուղար Քենեթ Քուրտլենդը, բրիտանա-հայկական համակուսակցական խմբի նախագահ լորդ Վոլփոլը, նրա տեղակալ Ջեյն Գրիֆիթսը, ինչպես նաև Լորդերի և Համայնքների պալատների այլ անդամներ: Ընթրիքի ժամանակ Մայքլ Մարտինը ՀՀ խորհրդարանական պատվիրակության այցը գնահատեց աննախադեպ երևույթ երկու երկրների խորհրդարանական հարաբերությունների տասնամյա պատմության մեջ: Միաժամանակ կողմերը փոխվստահեցրին, որ այդ այցը կարևոր դեր է խաղալու ոչ միայն երկու երկրների խորհրդարանական կապերի, այլև քաղաքական, տնտեսական,

---

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊՂԱ, ց. 8, գ. 9, թթ. 13-14:

մշակութային և այլ կարգի հարաբերությունների ամրապնդման գործում<sup>2</sup>: Ավելին, ընթրիքին բրիտանական կողմը հնչեցրեց այն գաղափարը, որ այսուհետ երկու խորհրդարանների միջև ավելի հաճախակի են դառնալու պատգամավորների փոխայցելությունները, իսկ առևտրի ու տուրիզմի բնագավառում եղած ներուժը օգտագործելու ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերը առավել գործնական բնույթ կունենան: Նա հավաստիացրեց, որ պատրաստ է օժանդակելու բոլոր հնարավոր լծակներով<sup>3</sup>:

Հետագա օրերին Միջխորհրդարանական միության բրիտանական խմբի նախագահ Ջոն Օսթինը ևս կազմակերպեց նույնպիսի ընթրիք, որի ժամանակ Լոնդոնում ՀՀ դեսպանը հատուկ առանձնագրույց ունեցավ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բրիտանական խմբի նախկին ղեկավար, իսկ այդ պահին սոցիալիստական խմբի նախագահ, Համայնքների պալատում մեծ հեղինակություն ու ազդեցություն վայելող պատգամավոր Թերրի Դեյվիսի հետ:

Այնուհետև տեղի ունեցան խորհրդարանական քննարկումներ, որոնց ընթացքում քննության առնվեցին հայ-բրիտանական երկկողմ կապերին, Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությանը և երկրում սահմանադրական բարեփոխումներին, հարավկովկասյան տարածաշրջանի զարգացման հեռանկարներին, Հայաստանի և հարևան երկրների հարաբերություններին և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին առնչվող հարցեր:

Երկկողմ կապերն ամրապնդելու ուղղությամբ քննարկումների ժամանակ եղան մի շարք առաջարկություններ, որոնք հետագայում ամրագրվեցին համաձայնագրի փաթեթում: Այդպիսի դրույթներից էին տեղեկատվության պարբերական փոխանակումը, ՀՀ Ազգային ժողովին ներկայացվող օրենքների նախագծերի փորձաքննությունը բրիտանացի օրենսդիրների և փորձագետների կողմից, խորհրդարաններում գործող բարեկամական խմբերի փոխայցելությունների, տնտեսական կապերի և մասնագետների փոխանակման աշխուժացումը, Հայաստանից սննդամթերքի և ոգելից խմիչքների ներմուծումը, տուրիզմի զարգացումը, եղբայրացած քաղաքների կապերի սերտացումը և այլն:

Քննարկումների ընթացքում հատուկ ուշադրություն դարձվեց Եվրախորհրդին Հայաստանի անդամակցության հարցին, որի առթիվ բրիտանական կողմը գոհունակությամբ ընդգծեց, որ Հայաստանն իր ստանձնած պարտավորություններն ընդհանուր առմամբ կատարում է նախատեսված ժամկետներում<sup>4</sup>: Այս առնչությամբ Հայաստանի պատվիրակության ղեկավարը հանդես եկավ երկու մեկնաբանությամբ. 1) նա նշեց, որ մահապատժի վերացման մասին օրենքի ընդունումը ընթացքի մեջ է. այն ուշանում է հասարակական կարծիքի նախապատրաստման գործընթացի հետ կապված որոշակի դժվարությունների պատճառով, 2) ինչ վերաբերում է Եհովայի վկա երիտասարդների զինվորական այլընտրանքային ծառայության մասին օրենքին, ապա վերջինիս նախագիծը գտնվում է խորհրդարանական քննարկումների փուլում<sup>5</sup>:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>4</sup> Ի դեպ, այդ ուղղությամբ Հայաստանի ձեռնարկումներին երկու շաբաթ առաջ Փարիզում նույնպիսի դրական գնահատական էր տվել նաև Եվրախորհրդարանի դիտորդների հանձնախումբը:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը:

Ի թիվս այլ խնդիրների, պառլամենտականների երկկողմ քննարկման առարկա դարձան նաև առանց նախապայմանների տարածաշրջանային համագործակցության և ԼՂ հակամարտության կարգավորման հարցերը: Դրանցից առաջինի կապակցությամբ կոչվեցին միակարծիք էին, որ տարածաշրջանում պետք է զարկ տալ առանց նախապայմանների համագործակցության ծավալմանը ամենատարբեր ասպարեզներում, իսկ երկրորդ հարցի վերաբերյալ բրիտանացիները շարունակեցին պնդել նախկինում իրենց արտահայտած տեսակետները:

Հայ խորհրդարանական պատվիրակության այս այցի կարևոր արդյունքներից էր և այն, որ պատվիրակության անդամները հնարավորություն ունեցան ծանոթանալու Համայնքների պալատի գործառույթներին, բրիտանական խորհրդարանականների աշխատանքային պայմաններին, ներկա եղան վարչապետ Բլեթերի հարցուպատասխանի ժամին, այցելեցին Ուելսի խորհրդարան, հանդիպումներ ունեցան Ռեդինգ քաղաքի տեղական խորհրդարանի ներկայացուցիչների և քաղաքապետի, Ֆորին օֆիսի աշխատակիցների հետ<sup>6</sup>:

Այդ հանդիպումներում մտքերի հետաքրքիր փոխանակումներ տեղի ունեցան հատկապես Ֆորին օֆիսի աշխատակիցների հետ ունեցած հանդիպման ընթացքում: Ֆորին օֆիսի աշխատակից, փորձված դիվանագետ, կովկասյան տարածաշրջանի հիմնախնդիրներին և դրանց վերաբերյալ բրիտանական կառավարող շրջանների ունեցած դիրքորոշումներին քաջածանոթ Մաքգրեգորը հանգամանորեն ներկայացրեց Եվրամիությանը Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացին, իր կարծիքով, խանգարող գլխավոր արգելքները: Դրանցից ամենահիմնականը բրիտանացի փորձառու դիվանագետը համարում էր կովկասյան տարածաշրջանի անկայուն վիճակը: Ընդ որում, խոսքը վերաբերում էր ոչ միայն Հայաստանին, որն այնուամենայնիվ կարողացավ 1999 թ. հոկտեմբերի ողբերգական դեպքերից հետո ստեղծել ներքաղաքական հավասարակշռություն և աստիճանաբար կայունացնել երկրի վիճակը, այլև տարածաշրջանային այն խնդիրներին, որոնց չլուծվելու դեպքում իրավիճակը կարող էր ավելի խճճվել՝ այստեղից բխող անկանխատեսելի բոլոր բացասական հետևանքներով հանդերձ:

Ըստ կարևորության՝ հաջորդ խոչընդոտը Մաքգրեգորը համարում էր հայ-թուրքական հարաբերությունների բարելավման սառեցված վիճակը, մինչդեռ դրանց կարգավորումը Մեծ Բրիտանիան դիտում է պատմական անհրաժեշտություն: Ընդ որում, նա նաև շեշտել է, որ ինքը քաջատեղյակ է հայ ժողովրդի պատմությանը և գիտի, որ հայը ունի ճկուն միտք և դիվանագիտական հմտություն, հանգամանք, որը անշուշտ դրական դեր կարող է խաղալ մատնանշված նպատակին հասնելու համար<sup>7</sup>:

Ըստ այդմ՝ բրիտանացի դիվանագետն առաջարկում էր չսպասել, որ Թուրքիան Հայաստանից ներողություն խնդրի, քանի որ կյանքն ու ժամանակը կգան հարթելու շատ ու շատ կնճռոտ հարցեր, այլ հարկավոր է առանց որևէ նախապայմանի ուղղակի հարաբերվել հարևան երկրի հետ: Ընդգծելով հանդերձ, որ 1915 թ. Օսմանյան Թուրքիան կազմակերպել է հայկական ջարդեր ու ոչ միայն հայերի, այլև հրեաների և այլ փոքրամասնությունների նկատմամբ վարել խտրական քաղաքականություն, այդու-

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 18:

հանդերձ նա գտնում էր, որ պետք է զարգացնել հարաբերությունները Թուրքիայի հետ, այլապես իրադարձությունները կարող են զարգանալ Հայաստանի համար ոչ ցանկալի սցենարով (նկատի ունենալ Ռուսաստան-Թուրքիա շփումների աշխուժացումը), որի հետևանքով Հայաստանը կհայտնվի մեկուսացված վիճակում<sup>8</sup>:

Ուշագրավ է, որ Հայաստանի՝ եվրաինտեգրման ճանապարհին բրիտանացի դիվանագետը կարևոր խոչընդոտ էր համարում նաև վերջին տարիներին Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների սերտացումը՝ անթաքույց հայտնելով, որ Հայաստանն ավելի շահած կլիներ, եթե ոչ թե միակողմանիորեն ուժեղացներ կապերը Ռուսաստանի հետ, այլ կարողանար դառնալ յուրատեսակ խաչմերուկ Արևմուտքի, Թուրքիայի և Ռուսաստանի համար:

Ի թիվս Հայաստանի եվրաինտեգրման ճանապարհին ընկած խոչընդոտների՝ բրիտանացի դիվանագետը մատնանշել է նաև 1999 թ. ՀՀ խորհրդարանում կատարված ողբերգական իրադարձությունը (հուսալով, որ ոճրագործները մահվան չեն դատապարտվի՝ հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունները), կրոնական փոքրամասնությունների, այդ թվում Եհովայի վկաների համար բնականոն պայմանների ստեղծումը, ԼՂ չկարգավորված հիմնախնդիրը, երկու երկրների միջև մշակութային կենտրոնների հիմնադրման ձգձգումը Հայաստանի կողմից<sup>9</sup>:

Այցի շրջանակներում Հայաստանի խորհրդարանականները հանդիպեցին նաև Միջազգային զարգացման դեպարտամենտի, ինչպես նաև վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աշխատակիցների հետ, իսկ այցի ավարտից հետո Լոնդոնի ՀՀ դեսպանության ջանքերով հրատարակվեց այն լուսաբանող գրքույկ<sup>10</sup>:

Հայ խորհրդարանականների պատվիրակության այցի ընթացքում բրիտանացի պառլամենտականների հետ ունեցած շփումները, հանդիպումների ժամանակ տեղի ունեցած երկկողմ քննարկումները, ձեռք բերված համաձայնություններն ու պայմանավորվածությունները լուրջ խթան հանդիսացան հայ-բրիտանական հարաբերությունների զարգացմանը նաև դիվանագիտական ուղիներով: Այդ է վկայում Միացյալ Թագավորությունում ՀՀ նորանշանակ<sup>11</sup> դեսպան Վահե Գաբրիելյանի՝ 2003 թ. հուլիսի 3-ին ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանին ուղարկած տեղեկագիրը, որտեղ նա ներկայացրել է ՄԹ Ֆորին օֆիսի Արևելյան վարչության պետ Սայմոն Բաթի հետ իր ունեցած հանդիպման մանրամասները: Ըստ տեղեկագրի՝ հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստան-Բրիտանիա երկկողմ հարաբերություններին, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Պուտինի՝ Լոնդոն կատարած այցին, Հայաստանի խորհրդարանական ընտրություններին, Հայաստան-Թուրքիա հարաբերություններին առնչվող հարցեր:

Ի մասնավորի անդրադառնալով Հայաստան-Միացյալ Թագավորություն երկկողմ հարաբերությունների զարգացմանը՝ զրուցակիցները համաձայնել են, որ այս գործընթացի հիմնական խթանիչ կարող են դառնալ փոխադարձ այցելությունները, որոնց հաճախակի և բարձր մակարդակով

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 19:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 20:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 21-22:

<sup>11</sup> Վահե Գաբրիելյանը ՄԲ-ում Հայաստանի դեսպան է նշանակվել ՀՀ նախագահի 2003 թ. մարտի 13-ի հրամանագրով (տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 14 մարտի 2003 թ.):

կազմակերպումը կնպաստի արդյունավետ քաղաքական խորհրդակցությունների անցկացմանը<sup>12</sup>:

Հանդիպման ընթացքում ՀՀ դեսպանը նշել է, որ Հայաստանի համար կենսական նշանակություն ունի եվրակառույցներին անդամակցելու հարցը: Հայաստանն արդեն սկսել է օրենսդրական դաշտի բարեփոխումները՝ համաձայն Եվրախորհրդի չափանիշների, սակայն կարիք ունի փորձագիտական օգնության, և այս առումով շատ օգտակար կլիներ բրիտանական կողմի աջակցությունը twinning projects նախագծերի իրագործման միջոցով:

Իր հերթին Սայմոն Բաթը ըմբռնումով է մոտեցել խնդրին և պատասխանել, որ դա պետք է լորջորեն քննարկվի TACIS DFID-ի հետ, որպեսզի որոշվեն համագործակցության հիմնական ուղղությունները և գտնվեն ֆինանսավորման աղբյուրներ<sup>13</sup>:

Ըստ այդմ՝ գրուցակիցները պայմանավորվել են, որ խնդրո առարկա հարցերի քննարկումները շարունակելու համար հայկական կողմը կներկայացնի այն ուղորտները, որտեղ ցանկալի է ստանալ բրիտանացի փորձագետների աջակցությունը:

Նրանք միաժամանակ անդրադարձել են նաև Եվրամիության ընդլայնման հետ կապված հարցերին՝ առանձնակի ուշադրություն դարձնելով Հարավային Կովկասի երկրների հանդեպ եվրոպական երկրների ունեցած դիրքորոշմանը: Այդ կապակցությամբ Սայմոն Բաթը նշել է, որ Հարավային Կովկասի երկրների նկատմամբ Եվրամիությունն առայժմ որոշակի ռազմավարական ծրագիր չունի, քանի որ նրան առաջին հերթին մտահոգում են Ուկրաինայի, Բելառուսի և Մոլդովայի խնդիրները, որովհետև նկատի է առնվում այդ երկրների հետ Եվրամիության ունեցած սահմանների երկարությունը և Եվրամիության չափանիշներից դրանց խիստ հեռու լինելը:

ՀՀ դեսպանի այն հարցին, թե արդյոք կարելի է ենթադրել, որ Եվրամիությունը հարավկովկասյան տարածաշրջանում կփոխի իր ռազմավարությունը միայն Թուրքիայի անդամակցելուց հետո, Բաթը պատասխանել է, որ այդ հարցի պատասխանը կտա ժամանակը<sup>14</sup>: Նա միաժամանակ հավելել է, որ Բրիտանիան գոհունակությամբ նկատում է, որ Հայաստանը չի մոռանում Եվրոպայի խորհրդի իր անդամակցության պարտավորությունների մասին, սակայն ինքը հիասթափված է թե՛ նախագահական և թե՛ խորհրդարանական ընտրությունների ընթացքից, սահմանադրական փոփոխությունների հանրաքվեի անհաջողությունից և այլն<sup>15</sup>:

2003 թվականի սեպտեմբերի 25-ին ՀՀ դեսպանը հանդիպեց նաև Միացյալ Թագավորության արտաքին գործերի պետքարտուղարի խորհրդակցականի տեղակալ, Ֆորին օֆիսի նախարար Բիլ Ռամելի հետ: Այդ հանդիպման արդյունքների մասին պատմող տեղեկատվական փաստաթուղթը հավաստում է, որ առանձնագրույցի ընթացքում երկու կողմերն ընդգծել են իրենց երկրների պատրաստակամությունը քաղաքական, ռազմական, տնտեսական, կրթական և մշակութային բնագավառներում համագործակցությունն ընդլայնելու մասին, ինչպես նաև արձանագրել, որ, ճիշտ է, նշված բնագավառների մի մասի դեպքում համագործակցությունը բավարար է, սա-

<sup>12</sup> Տե՛ս ՀՀ ԱԳՆ, ՊԴԱ, ց. 9, գ. 38, ք. 54:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, ք. 57:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը, ք. 58:

կայն նույնը չի կարելի ասել ռազմաքաղաքական ոլորտի մասին, մինչդեռ Հայաստանի աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս արդյունավետ համագործակցություն ծավալելու հենց այդ բնագավառում. այդ են վկայում այլ երկրների հետ Հայաստանի համագործակցության արդեն հաջողված օրինակները<sup>16</sup>:

ՀՀ դեսպանը Բիլ Ռամելի ուշադրությունն է հրավիրել նաև ECOSOC-ում Հայաստանի անդամակցության հարցին, որի շուրջ արդեն կար որոշակի համաձայնություն: Դեսպանը միաժամանակ նշել է, որ ՄԱԿ-ի նստաշրջաններում Հայաստանի և Մեծ Բրիտանիայի քվեարկության արդյունքները հիմնականում համընկնում են, որից կարելի է եզրակացնել, որ այդ տեսակետից երկու երկրների համագործակցությունը եղել է արդյունավետ: Դեսպանը խնդրել է Մեծ Բրիտանիայի հնարավոր աջակցությունը և ուղղորդությունը Հայաստանի եվրահիմնադրման ճանապարհին, ինչպես նաև ափսոսանք հայտնել, որ Հայաստանը դուրս է մնացել Եվրամիության «Նոր հարևաններ» ծրագրից<sup>17</sup>: Լսելով դեսպանի խնդրանքը՝ Բ. Ռամելը խոստացել է հայկական կողմի այդ մտահոգությունը փոխանցել Եվրոպայի հարցերով նախարար Դենիս Սըքշեյնին<sup>18</sup>:

2003 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ արտգործնախարարության աշխատակիցների հետ միջգերատեսչական խորհրդատվություններ անցկացնելու նպատակով Հայաստան ժամանեց Սայմոն Բաթի գլխավորած պատվիրակությունը: Զրույցների ընթացքում քննարկված հարցերի շրջանակներում հայաստանյան կողմն իր մտահոգությունն է հայտնել «Ավելի ընդարձակ Եվրոպա. Նոր հարևաններ» նախաձեռնությունից Հայաստանի դուրս մնալու կապակցությամբ. նշվել է, որ եթե Հարավային Կովկասի երկրներին միավորող հիմնական գաղափարը եվրակառույցներին ինտեգրվելն է, որպեսզի տարածաշրջանում ստեղծվեն վստահության մթնոլորտ և ավելի կայուն իրավիճակ, ապա Հայաստանի դուրս մնալը բնականաբար կխանգարի այդ նպատակի իրականացմանը:

Ս. Բաթը բացատրել է, որ այդ նախաձեռնությունը չի կարելի դիտել իբրև սահմանագիծ կամ պատմեչ եվրոպական և հարավկովկասյան երկրների միջև, քանի որ այս ծրագրով ընտրվել են այն երկրները, որոնք ծովային կամ ցամաքային սահմաններ ունեն Եվրամիության հետ: Հետևաբար դա ոչ մի խոչընդոտ չպիտի ստեղծի ՀՀ և ՄԲ երկկողմ համագործակցության ճանապարհին<sup>19</sup>: Ըստ այդմ` դարձյալ կարևորվեց երկու երկրների ռազմական համագործակցության ակտիվացումը, ինչպես նաև «ՀՀ պաշտպանության նախարարության և Մեծ Բրիտանիայի և Յյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության պաշտպանության նախարարության միջև պաշտպանության ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի ստորագրումը<sup>20</sup>:

Ընդամենը մի քանի օր անց` 2003 թ. դեկտեմբերի 3-ին, Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան Վ. Գաբրիելյանը հանդիպեց Միացյալ Թագավորության

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 88:

<sup>17</sup> Ի դեպ, Հայաստանում տարբեր ծրագրեր իրականացնող բրիտանական մի շարք հասարակական կազմակերպություններ նույնպես իրենց մտահոգությունն էին հայտնել այդ կապակցությամբ, որովհետև վստահ չէին, որ կշարունակվի Եվրամիության աջակցությունն այդ ծրագրերի իրագործմանը:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 89:

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 96-97:

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 98:

Միջազգային զարգացման պետքարտուղարի խորհրդարանական տեղակալ, նախարար Գարեթ Թոմասի հետ և քննարկեց հարավկովկասյան տարածաշրջանին, Հայաստան-Թուրքիա, Հայաստան-Իրան, Հայաստան-Վրաստան հարաբերություններին առնչվող հարցեր: Հանրապետության ներքին խնդիրներից երկկողմ ուշադրության առարկա դարձավ հատկապես Հայաստանում հանրային ոլորտում ընթացող բարեփոխումների ծրագրի իրականացման հարցը: Հայաստանի դեսպանն իր շնորհակալությունը հայտնեց Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամին հատկացված բրիտանական օժանդակության համար և խնդրեց ուշադրության կենտրոնում պահել այդ օգնության երկարացման հնարավորությունը: Գարեթ Թոմասը համաձայնեց քննարկել DFID-ի նշված ծրագրերի ընդլայնման հարցերը փոխընթացման հուշագիրը Հայաստանի կողմից ստորագրելուց և վավերացնելուց հետո<sup>21</sup>, որը, ըստ բրիտանական կողմի, անհարկի ուշանում էր:

Ընդհանուր առմամբ, 2002-2003 թթ. հայ-բրիտանական վերոհիշյալ շփումները երկկողմ հարաբերությունների զարգացման գործում դրական զգալի արդյունք տվեցին: Այդ է վկայում թեկուզև այն փաստը, որ 2003 թ. սկսվեց Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության (DFID) կողմից Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումներին ուղղված լայնածավալ ծրագրի հերթական փուլը, որի ընդհանուր արժեքը կազմում էր 3,5 միլիոն ֆունտ ստեռլինգ և տևելու էր 4 տարի, իսկ աղքատության դեմ պայքարի ծրագրի իրականացմանը 2003-2004 թթ. DFID-ն հատկացրեց 1,8 միլիոն ֆունտ ստեռլինգ:

Սակայն դեռևս անբավարար էր ռազմական ոլորտում իրականացվող համագործակցությունը: Բավական է ասել, որ 2003 թ. հունիսին Հայաստանում տեղի ունեցած «Համագործակցային լավագույն ջանք - 2003» զորավարություններին Միացյալ Թագավորությունից նասնակցեց միայն 150 զինվորից բաղկացած մի զորամիավորում, իսկ բրիտանական կողմի աջակցությունն այս ոլորտում սահմանափակվեց միայն Հայաստանի ռազմական ուսումնարաններում անգլերենի ուսուցման կենտրոնների ստեղծմամբ<sup>22</sup>:

Հայ-բրիտանական խորհրդարանական համագործակցությունը շարունակվեց ակտիվաճալ նաև 2004-2005 թթ.՝ ձեռք բերելով միանգամայն նոր որակ ու ծավալ, որը էապես տարբերվում էր 1990-ական թվականների մակարդակից: Բանն այն է, որ եթե նախորդ շրջանում Հայաստանին գոհացնում էր հարավկովկասյան տարածաշրջանում Մեծ Բրիտանիայի հավասարակշռված ու անկողմնակալ դերակատարումը, ապա այժմ արդեն ընդլայնվում են երկկողմ հարաբերությունների ոլորտները, ներառվում նոր խնդիրներ ու հարցեր, դրանց տրվում գործնական լուծումներ: Դրանում, անշուշտ, կարևոր նշանակություն ունեցավ եվրոպական կառույցներում Հայաստանի ակտիվ ներգրավվածության հանգամանքը:

Ասվածի լավագույն վկայությունն է 2004 թ. փետրվարի 16-ին Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման պետքարտուղարի տեղակալ, խորհրդարանի անդամ Գարեթ Թոմասի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան, որն իրականացվեց տարածաշրջանային այցի շրջանակներում: Այցի ընթացքում պատվիրակության ղեկավարը հանդիպումներ ունեցավ ՀՀ Ազգային ժողովի և կառավարության պաշտոնատար անձանց հետ: Երկու

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղը, թթ. 58-59:

<sup>22</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 107:

երկրների միջև ստորագրվեց բրիտանական տեխնիկական աջակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր<sup>23</sup>:

Նույն թվականի մարտի 25-ին Մեծ Բրիտանիայի պաշտպանության և անվտանգության հետազոտությունների թագավորական ինստիտուտում (Լոնդոն) կազմակերպված «Ժողովրդականացում, կայունություն և զարգացում Կովկասում» մեկօրյա գիտաժողովին Հայաստանի պատվիրակությունը մասնակցեց ի դեմս Լոնդոնում ՀՀ դեսպան Վ. Գաբրիելյանի, ՀՀ արտաքին գործերի նախարարի օգնականի և ՀՀ դեսպանության խորհրդականի<sup>24</sup>:

Գիտաժողովին մասնակցում էին նաև Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները, ինչպես նաև Միացյալ Թագավորության տարբեր գերատեսչությունների, մասնավոր և պետական ընկերությունների, բանկերի, գաճազան հիմնադրամների, ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Քննարկման նյութը հարավկովկասյան տարածաշրջանում անվտանգության խնդիրն էր, որի վերաբերյալ զեկուցողները ներկայացրին սեփական դիտարկումների հիման վրա ձևավորված իրենց տեսակետներն ու համոզմունքները: Ինչպես միշտ, այս անգամ ևս Ադրբեջանի պատվիրակության ղեկավարությունը փորձեց իրականացնել հակահայկական քարոզչություն: Ըստ այդմ` ադրբեջանական պատվիրակության ղեկավար Սամեդ Սեյիդովը, զեկուցման մեջ Հայաստանին համարելով ագրեսոր երկիր, իր խոսքն ավարտեց` ասելով, որ իբր «...Ադրբեջանի նկատմամբ շարունակվող ագրեսիան իր ձևակերպումն է ստացել ՄԱԿ-ի բանաձևերում»<sup>25</sup>:

Գիտաժողովի մասնակիցները ոչ միայն միահամուռ դատապարտեցին այս ձևակերպումը, այլև Ադրբեջանի պատվիրակությանը զգուշացրեցին, որ նման փորձագիտական գիտաժողովներում նրանք պարտավոր են իրենց արտահայտություններում զգուշ լինել, չօգտագործել այնպիսի բնութագրումներ ու տերմիններ, որոնք Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների կամ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կապակցությամբ չեն ընդունվել և հավանության չեն արժանացել միջազգային կազմակերպությունների կամ համաժողովների կողմից<sup>26</sup>:

Հայ-բրիտանական հարաբերությունների աշխուժացման գործընթացը ավելի գործնական դարձավ 2004 թ. գարնանից, երբ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը ապրիլի 22-ին աշխատանքային այցով ժամանեց Լոնդոն: Տարեվերջին այդ հարաբերությունները մտել էին բնականոն հուն, որի լավագույն վկայությունը միջխորհրդարանական միության բրիտանական խմբի պատվիրակության այցն էր Հայաստան հոկտեմբերի 18-ից 23-ը<sup>27</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը` կարող ենք ասել, որ 2002 թ. հունվար-փետրվար ամիսներին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի խորհրդարանական պատվիրակության այցը Մեծ Բրիտանիա վճռորոշ նշանակություն ունեցավ հայ-բրիտանական հարաբերությունների ակտիվացման, ծավալման ու զարգացման գործում: Իսկ վերջիններս, ինչ խոսք, մեծապես նպաստեցին ինչպես ՀՀ միջազգային հեղինակության բարձրացմանը և դրանով իսկ` եվրակառույցներին ինտեգրմանը, այնպես

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 91:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 59:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 60:

<sup>27</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 91:



էլ հանրապետության ներսում ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման հույժ կարևոր գործընթացին:

**ГАЙК САРКИСЯН – *Codeйствие Великобритании процессу евроинтеграции и становления демократических институтов в Армении.*** – В статье освещается визит парламентской делегации Национального собрания РА в Великобританию, состоявшийся в январе–феврале 2002 года. Этот визит сыграл решающую роль в деле активизации, расширения и развития армяно-британских отношений, которые, в свою очередь, во многом способствовали как росту международного авторитета Армении и тем самым ее интеграции в евроструктуры, так и важнейшему процессу становления демократических институтов в нашей стране.

По ходу диалога стороны высказали ряд предложений, в пакете которых были закреплены такие, как периодический обмен информацией, экспертиза законопроектов, обсуждаемых в НС Армении, британскими законодателями и юристами, взаимные контакты работающих в обоих парламентах групп дружбы, оживление экономического сотрудничества и обмена специалистами, импорта в Британию продуктов питания и алкогольных напитков из Армении, а также развитие туризма и более тесные связи между городами-побратимами и т. п.

Состоявшиеся за время визита встречи армянских парламентариев с их британскими коллегами, двусторонние дискуссии, заключенные в итоге соглашения и договоры послужили серьезным стимулом к развитию армяно-британских отношений также и в дипломатической сфере.

Имевший место диалог и обоюдное стремление укреплять двусторонние связи подготовили почву для дальнейшего, более глубокого сотрудничества.

Важным шагом было также обсуждение региональных вопросов, в частности армяно-турецких отношений; это обсуждение ещё раз подтвердило готовность Великобритании способствовать решению региональных проблем.

**HAIK SARGSYAN – *The UK assistance to Armenia in the process of European integration and the establishment of democratic institutions.*** – The paper dwells on the visit of the parliamentary delegation of the RA National Assembly to the United Kingdom in January and February of 2002. The visit played a crucial role in fostering, extending and furthering the Armenian-British relations. The visit improved Armenia's reputation in the international arena, contributed to the country's integration into the European structures and advanced the process of building democratic institutions in the country.

During the talks both sides agreed on exchanging information regularly, having the RA NA legislative drafts assessed by British experts, encouraging interaction between the friendship groups of both parliaments, maintaining professional exchanges, triggering economic relations, increasing food and spirits export from Armenia, developing tourism, strengthening links between sister-cities, etc.

The meetings held during the visit of the Armenian MPs with their colleagues, as well as the agreements they reached during the talks furthered the establishment of Armenian-British diplomatic relations.

The dialogue between two countries and the mutual wish to promote bilateral relations prepared the ground for further cooperation between Armenia and the United Kingdom.

Among other important steps was the discussion of such regional issues as the Armenian-Turkish relations. It prompted once again the UK's willingness to have its contribution to the resolution of regional problems.